

«Պրեզաբալին» ընդգրկվել է հսկման ենթակա նյութերի ցանկում

Օգոստոսի 3-ին հաստատվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի օգոստոսի 21-ի («Հայաստանի Հանրապետությունում հսկման ենթակա թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների կազմը (ցանկը) հաստատելու մասին») թիվ 1129-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» թիվ 931-Ն ՀՀ կառավարության որոշումը:

Հայաստանի Հանրապետությունում հսկման ենթակա թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների ցանկում (հավելվածի N 3 ցուցակ) ընդգրկվել է «Պրեզաբալին» նյութը, որի շրջանառության հսկողության նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում սահմանվում են որոշակի պայմաններ:

Կառավարության որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից վեց ամիս հետո: Հարկ է նշել, որ «Պրեզաբալին» նյութը պարունակող դեղերը դեղատնից բաց կթողնվեն բացառապես բժշկի դեղատոմսի առկայության դեպքում:

ՀՀ կառավարության 03.08.2017թ. թիվ 931-Ն որոշում

<http://www.moh.am/images/legal-93.pdf>